

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ «ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ»-Ի ՆՈՐԱՀԱՅՏ ԲԱՌԵՐԻ  
ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ

*ՍՈՒՄԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ*

*ՀՀ ԳՍԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ*

Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ը Սուրբ Գրքի ամենալիակատար գրված մեկնությունն է, և պատահական չէ, որ հատկապես այս գրքում հանդիպում ենք չորս հարյուրը գերազանցող նոր բառերի. դրանք երևան եկան հատկապես «Գիրք հարցմանց» - ի Համաբարբառն ավարտելուց հետո: Գրաբարյան բառագանձը ներառող հայտնի բոլոր բառարաններից այսքան բառերի դուրս մնալը բացատրվում է միայն մի հանգամանքով. բոլոր բառարանագիրները այս կամ այն կերպ հիմք են ընդունել Նոր հայկազեան բառարանը, իսկ Տաթևացու աշխատություններին միախառնված միաբանները չեն անդրադարձել ընդհանրապես:

Սուրբ Գրքի համակողմանի այն մեկնությունը, որ տվել է Գրիգոր Տաթևացին՝ մի կողմից ողջ վարդապետական նախորդ մեկնություններն էր ամփոփում, մյուս կողմից՝ բերում հեղինակի բյուրեղացած, նոր երանգներով հարստացած խոսքը: Սա իր հերթին հայերենի խիստ ճկուն լեզվամտածողության դրսևորումների գունագեղ մի ներկայանակ է, որ «Գիրք հարցմանց»-ի խիստ արժեքավոր մեկնության չափազանց հետաքրքրական կողմերից մեկն է:

Նորակերտ բառերը հեղինակի համար դարձել են հնարավորության նոր միջոց՝ բացատրելու մեկնաբանվող նյութը. այսկերպ Տաթևացին իբրև Սուրբ Գիրքը մեկնող աստվածաբան վարդապետ շրջանառության մեջ է դրել, օրինակ, երկու տասնյակից ավելի ծիսա-կրոնական բառեր. **անմկրտեալ**, **բազմաքրիստոս**, **ողջոյնատաք** (իմա՝ աստված), **ողջոյնընկալ** (իմա՝ աստվածածին), **որթապաշտ**, **նախարարչութիւն**, **նախաճաշակումն**. օրհնության կարգի հետ կապված՝ մի ամբողջ բառախումբ.

**գերեզմանօրհներք, դեզօրհներք, մայրօրհներք, ջրօրհներք, սերմնօրհներք, քահանայօրհներք** և այլն:

Նորակազմ բառերում կա մի խումբ, որի գործածությունը այսօր շատ սովորական է, ինչը վկայում է, որ Տաթևացին ոչ միայն հրաշալի տիրապետել է բառաստեղծման կադապարներին, այլև հարազատ է մնացել լեզվամտածողությանը այնչափ, որ հետագա դարերում շատ նորակազմություններ մտել են բառապաշարի համագործածական բառերի շարքը, ինչպես օրինակ՝ **ամբողջութեամբ, անմորուք, անստոյգ, արհեստական, արհեստաւոր, բաժանորդ, բացարձակապես, բացօրոշ, բռնամիտ, երկխօսութիւն, մշտապէս, մսակոյտ, հակասական, հասանելի, յիշատակութիւն, յաւիտենականութիւն, նախապատրաստութիւն, ներգոյական, նշանադրութիւն, ուղղաձև, պատահական, սևամորթ, սրտային, սրտոտ, վատահամբաւ, տեսակաւորել, փոշիանալ, փոքրիշատե, փութանցիկ** և այլն:

Ապագային են նայել նաև Տաթևացու այն նորակազմությունները, որոնց մի մասը Հրաչյա Աճառյանի «Հայերեն արմատական բառարան»-ում հիշատակվում է որպես **նոր բառ**. դրանց մեջ են (առանց հեղինակային վկայության) **ԱՐՀԱՄԱՐՀԵԼԻ, ԲԱԺԱՆԵԼԻ, ԽԱՉՀԱՄԲՈՅՐ** բառերը, սակայն, դրանք Տաթևացին ոչ միայն օգտագործել է, այլև նույն բաղադրիչով նաև այլ բառեր կազմել, այսինքն՝ նույն բաղադրիչով կազմել շարքեր, ինչը մեկ անգամ ևս վերահաստատում է դրանց այդ հեղինակին պատկանելու հանգամանքը. ասենք՝ **ԲԱԺԱՆԵԼԻ, ԲԱԺԱՆԻՉ, ԲԱԺԱՆՈՐԴ** (վերջինս ժամանակակից հայերենում դարձյալ համագործածական բառերի շարքում է). կամ՝ **ԲԱՆԱԿԱՆԱԲԱՐ, ԲԱՆԱԿՐՈՒԹԻՒՆ, ԲԱՆԱԻՈՐԻԼ. ԱՅԼԱԳԻԾ, ԱՅԼԱԿԱՏԱՐ, ԱՅԼԱՄԱԶ, ԱՅԼԱՅԼՈՏ, ԱՅԼԱՎԻՃԱԿ. ԱՐՏԱԳՆԱՑՈՒՄՆ, ԱՐՏԱԳՈՒՆԵԼ, ԱՐՏԱԾՈՐՈՒՄՆ, ԱՐՏԱՀՈՍՈՒՄՆ ԱՐՏԱՅԱՅՏՈՒՄՆ, ԱՐՏԱՔԱՐՇԵԼ, ԱՐՏԱՔՍԵԼԻ** և այլն:

Մեկ այլ հետաքրքիր փաստ. գրաբարի գործածական բառարմատները խիստ կենսունակ են նաև Տաթևացու նորակազմությունների պարագայում. օրինակ՝ **«բազմ»** բաղադրիչով գրաբարյան բառարանները ավելի քան երեք հարյուր բառ են վկայում. Տաթևացու նոր բառեր կազմելիս նույնպես հաճախ դիմել է **«բազմ»** բաղադրիչին և գրաբարյան բառերին ավելացրել **բազմաբաշխութիւն, բազմեղանակ, բազմակուլ,**

**բազմամայր, բազմաքրիտոս** ձևերը: Նույնն է նաև հայերենի հաճախական **ան-** նախածանցի դեպքում. գրաբարյան հսկայական շարքին Տաթևացին ավելացնում է շուրջ երկու տասնյակ նորակազմություններ. **անաջատություն, անբախելի, անբովանդակապէս, աներչոտ, անթառամելի, անխելամուտ, անհատողություն, անմաշելի, անմեղր, անմկրտեալ, անուսումնապէս, անպարագրելի, անստոյգ, անվարձատրելի** և այլն:

Նշենք նաև, որ մի շարք հեղինակներ, Հր. Աճառյանը, հետագայում՝ Ռ. Ղազարյանը, Լ. Հովհաննիսյանը, որոնք իրենց աշխատություններով համալրել են գրաբարյան բառարանները, բազմաթիվ անգամ հղում են Գրիգոր Տաթևացուն, ինչը դարձյալ հաստատում է այդ բառերի Տաթևացու հեղինակած լինելու փաստը: Օրինակ, Լ. Հովհաննիսյանի «Գրաբարի բառարան. Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր» աշխատության մեջ **ԱԽԹԱՐՄԱՅ. ԱՆՀԱՏՈՂՈՒԹԻՒՆ, ԱՌՆՉԱԿԱՆ, ԲԱՅԲԱՐՉՈՒԹԻՒՆ, ԿՈՂԻՏ, ՄԻՋԱԿՕՐԷՆ, ՊԱՏԱՐԱԳԵԼԻ, ՓՈԽԱՐԿԱՊԷՍ** բառերի դեպքում հղվում է դարձյալ Գրիգոր Տաթևացուն (տարբեր աշխատությունների): «Միջին հայերենի բառարանի» դեպքում այդ հղումները կազմում են՝ ընդամենը՝ **100**, որից **«Գիրք հարցմանց»-ին՝ 79-ը**:

Նոր բառեր կազմելիս Տաթևացին դիմել է հայերենի ավանդական բառակազմական եղանակներին՝ **բառաբարդմանը** և **ածանցմանը**, որոնց մեջ հանդիպում ենք հնարավոր գրեթե բոլոր ենթակադապարներին: Սակավաթիվ են նորակազմ բառերի մեջ **փոխառությունները**՝ գրեթե մեկ տասնյակ: Հազվադեպ ունենք նաև **արմատական** բառեր: Եվ միայն մի քանի նորակազմ բառ հիշատակվում է **ուրիշի ուղղակի խոսքում. անփորձել, մաքրելիք, նախաճաշակումն**:

Շատ ավելի քիչ են բառակազմական առումով խնդրահարույց նորակազմությունները, որոնցից մեկին փորձենք անդրադառնալ:

Տաթևացին **շինականի երեխայի ծննդյան օրը** կոչում է **ԱՂԱՐՈՒՔ** (Նախ՝ որպէս հասարակ շինականք ի ծննդեան զաւակաց զմին օրն պատուեն աղարուք կոչելով: - 321): Այս բառի պարագայում մինչև բառակազմական վերլուծություն կատարելը պետք է պատասխանել, թե ինչ է այն նշանակել: Եթե հիմք ընդունենք **ՆՀԲ-ի՝ ԱՂԻ(Ք)** -

**Որդի աղեաց. Միրելի գաւակ.** բացատրութիւնը, ապա կարելի է մեկնել՝ **գավակ, երելա:** Կա նաև մեկ այլ տարբերակ. «Հայերէն գաւառական բառարան»-ում **ԱՂ** բառահոդովածի տակ Սեբաստիա, Պօլիս բարբառների համար բերվում է մարմնի այն մասի բացատրությունը, «որ կը շոշափէ ծննդական գործարանները» (Ղարաբաղի բարբառում՝ **աղուէսինք, ըղվեսուք**) նմանատիպ բացատրություն բերում է նաև Ստեփանոս Մալխասյանցը՝ «Հայերէն բացատրական բառարան»-ում, այսինքն այս կամ այն կերպ բառը եթէ նշանակում է **ծնունդ, ժառանգ,** (այս դեպքում, ծագումնաբանորեն դրա հետ կարող ենք կապված տեսնել նաև **ԱՂԽ** բառը՝ «ցեղ, զարմ, ժողովուրդ» բացատրությամբ), ապա բառը կարելի է համարել **գոյական հիմքով կազմված ածանցավոր բառ** (-ուք վերջածանցի գոյականակերտ դրսևորումները ունենք ԱՅՐՈՒՔ, ԾԵԾԿՈՏՈՒՔ, ՍՐՏԽԱՌՆՈՒՔ և այլ բառերում): Հօգուտ **ծնունդ, ժառանգ** բացատրության վկայում է նաև **ԱՂՈՒՐԻ** (ըստ ՆՀԲ-ի՝ «ուղէշ, շառաւիղ», ըստ Աճառյանի՝ «որթի տաշտաթաղ անելու ճիւղը», ապա՝ «սերունդ, շառաւիղ») բառի գոյությունը հայերենում, սակայն այս դեպքում պետք է բացատրել **ԱՂՈՒՐԻ - ԱՂԱՐՈՒՔ** անցումը: Բառակազմական կաղապարը փոխվում է, եթէ այն դիտարկենք կապված **«ԱՂԱԼ»** բառի հետ (ԱՂԱՐՈՒՔ՝ այսինքն աղալու, ուտելու, ծամելու միջոցառում). այս դեպքում էլ կունենաք բայական հիմքով կազմված ածանցավոր բառ. ի դեպ, Տաթևացին ունի նաև **ԱՂՈՐԻՔ** նորակազմությունը, որ նշանակում է **աղացող, աղալու միջոցներ** («Իններորդ՝ աղալն յերկանս. յաղորիս հոգւոյ և մարմնոյ ծակել»: - 339): Նշենք նաև, որ **ԱՂՈՒՐԻ** բառը «Հայերէն արմատական բառարան»-ում չստուգաբանված բառերի շարքում է, որին հայագետը տալիս է «հագուագիւտ» պիտակը:

Այսպիսով, ինդիքը իմաստային դաշտում հարցեր է առաջացնում նաև բառակազմական կաղապարում, որտեղ առաջին հայացքից պարզ թվացող կառուցվածքում կարիք է առաջանում պատմական կամ տարժամանակյա վերլուծություն կատարել:

Այս առումով, Տաթևացին եզակի այն հեղինակներից է, որ կարողացել է բառակազմական կաղապարները շատ հաճախ օգտագործել ինքնատիպ, նորովի և

ազատ: «Ենթակայության տակ գտնվող» իմաստով, օրինակ, Տաթևացին օգտագործում է **ՆԵՆԹԱԿԱՅՈՋ** բարդ բառը՝ ածանց + ածանց + հոդակապ + հիմք + վերջավորություն կադապարով («Այլ ի մարմինն նիթօրէն և սկզբնաբար. իսկ ի հոգին տեսակաբար և իբր նենթակայոջ»: - 567.): «Պարունակելի, բաղկացական, ենթակայության տակ, ենթակայության ներսում գտնվող» իմաստով այս բառը բերում է միայն Երեմիա Մեղրեցին **ՆԵՆԹԱԿԱՅՈՒՄ**՝ ձևով և կասկած չկա, որ այստեղ գործ ունենք **«նի + ենթակայութիւն»** կառույցի հետ, այսինքն՝ ենթակայության տակ, ենթակայության մեջ, ենթակայության ներսում գտնվող, հատկապես, որ **ենթակայ** նշանակում է նաև՝ «տակը եղած». այլ հարց է, որ Երեմիա Մեղրեցին **ՆԵՆԹԱԿԱՅՈՒՄ**՝ ձևը համարում է պարառական հոլովածև՝ հաշվի չառնելով բերվող օրինակի ներգոյական հոլովածևը («պարառական հովլով, ենթակայ, բայց նշանակէ զպատահումն»<sup>1</sup>, ԵՄԲՀ, էջ 237): Եզակի այս գործածությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ Տաթևացու օրերում դեռ շարունակել է կենսական մնալ **«նի»** հնագույն նախածանցը՝ ներս, տակ, ներսում նշանակությամբ:

Կամ բոլորիս հայտնի **ԲՈՒՐՎԱՌ**՝ խնկաման, բառը Տաթևացին բերում է **ԲՈՒՐԲԱՌ** ձևով, որ ըստ մեզ ավելի նախնի և հին ձև է: Բարդ բառ, կազմված գոյական + բայ՝ հիմք կադապարով: Բառարանները վկայում են **ԲՈՒՐՈՒԱՌ**, ապա երկրորդաբար՝ **ԲՈՒՐՈՒՎԱՌ**, **ԲՈՒՐՎԱՌ** ձևերը: Կարծում ենք նախնական **ԲՈՒՐԲԱՌ** ձևից անցում է կատարվել **ԲՈՒՐՈՒԱՌ**, ապա՝ **ԲՈՒՐՎԱՌ** ձևին. առաջինի դեպքում ունենք **բուրմունքը բառնալ, բարձրացնել**, երկրորդի դեպքում՝ **բուրմունքը առնել**: Նախնական է **ԲՈՒՐԲԱՌ** -ը, որից և անցումը կատարվել է **ԲՈՒՐՎԱՌ** - ին՝ ժողովրդական ստուգաբանության սկզբունքով, եթե նկատի ունենանք, որ բուն նշանակությամբ բուրմունքը կարող է բարձրանալ, տարածվել, բայց ոչ վառվել («...և գո՛րծ է նոցա, հրամանաւ քահանային աւետարան կարդալ, քարոզել, և բառնալ քշոց և բուրբառ. և նստիլ ամեննին ո՛չ»): - 608.):

---

<sup>1</sup> Մեջբերումը բերում ենք այնպես, ինչպես կա:

Ինչպես ասացինք, սակավաթիվ են նորակազմ բառերի մեջ փոխառությունները. **ԲՈՒՐԳԱԹՈՒՐ, ԵՍԹԱՆԱՆՈՒՆԴԻ, ԿՈՆՔԻԼՈՍ, ՋՂՈՒՏ, ՋՈՒԱՐԻ (ՋՈՐՈՋ), ՄԻՄՔՈՒՖՏ, ՎԱԻՌԷՔ (ՎՕՌԷԱՍ ՎՕՌԷՍՔ), ՓՕՍՏԱԶԻՍ, ՔԱԼԱՄԻԿԷ, ՔԱՐԹՈՇ, ՔՈՒԷԱՆԱՍ:** Բառակազմության եղանակի վերլուծության առումով հնարավոր է խոսել վերջին ձևի մասին, որ սուկածանցավոր բայական ձև է՝ կազմված **ՔՈՒԷ՝** «խորանարդ» արմատից, -ան միջածանցից և բայական «ամ» վերջավորությունից:

Բառակազմական առումով նորակազմությունների մեջ գերակշիռ մաս են կազմում ածանցավոր բառերը. **անմաշելի, անմեղր, անմկրտեալ, անմորուք, անուսումնապէս, անպարագրելի, անստոյգ, անվարձատրելի, անփոխանորդ, հալածու:**

Բարդ բառերի մեջ զգալի թիվ են կազմում մարդուն, նրա խառնվածքին վերաբերող բառերը. **աղուեսաբարոյ, անխելամուտ, բազմակույ, արձակաքայլ, բարեսուն, բացունչն, բոնամիտ, գիճասէր, թիրամիտ, թխակն** և այլն: Զգալի թիվ են կազմում նաև կրոնական և ծիսական ոլորտին վերաբերող նորակազմությունները. **բազմաքրիստոս, ողջոյնընկալ, ողջոյնառաք, դեակոչ, գերեզմանօրհնէք, սերմնօրհնէք, մայրօրհնէք, սոնահմայք քահանայթաղէք, քահանայօրհնէք:**

Արմատական բառերից են՝ **ԴԷՇ, ԴՕՇ, ԳԻՇ, ԿՈՊԻՏ:**

## **СЛОВООБРАЗОВАТЕЛЬНЫЕ ФОРМЫ НОВЫХ СЛОВ И "КНИГИ ВОПРОСОВ"**

**ГРИГОРА ТАТЕВАЦИ**

**СУСАННА ГРИГОРЯН**

### **РЕЗЮМЕ**

После издания словоуказателя "Книги вопросов" Григора Татеваци с уверенностью можно сказать, что словарный запас древнеармянского языка, грабара, пополнился 470-ью новыми словами. С точки зрения лексикографии интересен тот факт, что эти слова от "Ա" до "Կ" и от "Հ" до "Ֆ" по количеству почти равны. По значению они относятся к религиозным, научным, душевным и физическим качествам человека, а также другим сферам.

Словообразовательных форм, в основном – две. Это – суффиксация и усложнение слова. Крайне редки случаи, когда новые слова приводятся в прямой речи другого.

**WORD-BUILDING PATTERNS OF NEW WORDS OF "THE BOOK OF QUESTIONS" OF  
GRIGOR TATEVATSI**

**SUSANNA GRIGORYAN**

**SUMMARY**

After edition of the word-index "The book of questions" of Grigor Tatevatsi we may confidently say that the basic ancient armenian (grabar) stock of words supplements by 470 new words. From the point of view of lexicography it's interesting that these words from "Ա" to "Կ" and from "Հ" to "Ֆ" are almost equal.

By meaning they concern to religious, scientific, man's psychological and physical character and of other sphere. In the main there are two word-building patterns way - suffixation and word's compounding.

In extremely rare cases new words are in direct speech of others.

**ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ «ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ»-Ի ՆՈՐԱՀԱՅՏ ԲԱՌԵՐԻ  
ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ**

***ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ***

***ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ***

Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ը Սուրբ Գրքի ամենալիակատար գրված մեկնությունն է, և պատահական չէ, որ հատկապես այս գրքում հանդիպում ենք չորս հարյուրը գերազանցող նոր բառերի. դրանք երևան եկան հատկապես «Գիրք հարցմանց» - ի Համաբարբառն ավարտելուց հետո: Գրաբարյան բառագանձը ներառող հայտնի բոլոր բառարաններից այսքան բառերի դուրս մնալը բացատրվում է միայն մի հանգամանքով. բոլոր բառարանագիրները այս կամ այն կերպ հիմք են ընդունել Նոր հայկազեան բառարանը, իսկ Տաթևացու աշխատություններին միախառնված միաբանները չեն անդրադարձել ընդհանրապես:

Սուրբ Գրքի համակողմանի այն մեկնությունը, որ տվել է Գրիգոր Տաթևացին՝ մի կողմից ողջ վարդապետական նախորդ մեկնություններն էր ամփոփում, մյուս կողմից՝ բերում հեղինակի բյուրեղացած, նոր երանգներով հարստացած խոսքը: Սա իր հերթին հայերենի խիստ ճկուն լեզվամտածողության դրսևորումների գունագեղ մի ներկայանակ է, որ «Գիրք հարցմանց»-ի խիստ արժեքավոր մեկնության չափազանց հետաքրքրական կողմերից մեկն է:

Նորակերտ բառերը հեղինակի համար դարձել են հնարավորության նոր միջոց՝ բացատրելու մեկնաբանվող նյութը. այսկերպ Տաթևացին իբրև Սուրբ Գիրքը մեկնող աստվածաբան վարդապետ շրջանառության մեջ է դրել, օրինակ, երկու տասնյակից



ավելի ծիսա-կրոնական բառեր. **անկրտեալ, բազմաքրիստոս, ողջոյնառաք** (իմա՝ աստված), **ողջոյնընկալ** (իմա՝ աստվածածին), **որթապաշտ, նախարարչութիւն, նախաճաշակումն**. օրհնութեան կարգի հետ կապված՝ մի ամբողջ բառախումբ. **գերեզմանօրհնէք, դեզօրհնէք, մայրօրհնէք, ջրօրհնէք, սերմնօրհնէք, քահանայօրհնէք** և այլն:

Նորակազմ բառերում կա մի խումբ, որի գործածությունը այսօր շատ սովորական է, ինչը վկայում է, որ Տաթևացին ոչ միայն հրաշալի տիրապետել է բառաստեղծման կաղապարներին, այլև հարազատ է մնացել լեզվամտածողությանը այնչափ, որ հետագա դարերում շատ նորակազմություններ մտել են բառապաշարի համագործածական բառերի շարքը, ինչպես օրինակ՝ **ամբողջութեամբ, անմորուք, անստոյգ, արհեստական, արհեստաւոր, բաժանորդ, բացարձակապես, բացորոշ, բռնամիտ, երկխօսութիւն, մշտապէս, մսակոյտ, հակասական, հասանելի, յիշատակութիւն, յաւիտենականութիւն, նախապատրաստութիւն, ներգոյական, նշանադրութիւն, ուղղաձև, պատահական, սևամորթ, սրտային, սրտոտ, վատահամբաւ, տեսակաւորել, փոշիանալ, փոքրիշատե, փութանցիկ** և այլն:

Ապագային են նայել նաև Տաթևացու այն նորակազմությունները, որոնց մի մասը Հրաչյա Աճառյանի «Հայերեն արմատական բառարան»-ում հիշատակվում է որպէս **նոր բառ**. դրանց մեջ են (առանց հեղինակային վկայութեան) **ԱՐՀԱՄԱՐՀԵԼԻ, ԲԱԺԱՆԵԼԻ, ԽԱՉՀԱՄԲՈՅՐ** բառերը, սակայն, դրանք Տաթևացին ոչ միայն օգտագործել է, այլև նույն բաղադրիչով նաև այլ բառեր կազմել, այսինքն՝ նույն բաղադրիչով կազմել շարքեր, ինչը մեկ անգամ ևս վերահաստատում է դրանց այդ հեղինակին պատկանելու հանգամանքը. ասենք՝ **ԲԱԺԱՆԵԼԻ, ԲԱԺԱՆԻՉ, ԲԱԺԱՆՈՐԴ** (վերջինս ժամանակակից հայերենում դարձյալ համագործածական բառերի շարքում է). կամ՝ **ԲԱՆԱԿԱՆԱԲԱՐ, ԲԱՆԱԿՐՈՒԹԻՒՆ, ԲԱՆԱԻՈՐԻԼ. ԱՅԼԱԳԻԾ, ԱՅԼԱԿԱՏԱՐ, ԱՅԼԱՄԱԶ, ԱՅԼԱՅԼՈՏ, ԱՅԼԱՎԻՃԱԿ. ԱՐՏԱԳՆԱՅՈՒՄՆ, ԱՐՏԱԳՈՒՆԵԼ, ԱՐՏԱԾՈՐՈՒՄՆ, ԱՐՏԱՀՈՍՈՒՄՆ ԱՐՏԱՅԱՅՏՈՒՄՆ, ԱՐՏԱՔԱՐՇԵԼ, ԱՐՏԱՔՍԵԼԻ** և այլն:

Մեկ այլ հետաքրքիր փաստ. գրաբարի գործածական բառարմատները խիստ կենսունակ են նաև Տաթևացու նորակազմությունների պարագայում. օրինակ՝ «**բազմ**»

բաղադրիչով գրաբարյան բառարանները ավելի քան երեք հարյուր բառ են վկայում. Տաթևացու նոր բառեր կազմելիս նույնպես հաճախ դիմել է «բազմ» բաղադրիչին և գրաբարյան բառերին ավելացրել **բազմաբաշխություն, բազմեղանակ, բազմակույ, բազմամայր, բազմաքրիտոս** ձևերը: Նույնն է նաև հայերենի հաճախական **ան-** նախածանցի դեպքում. գրաբարյան հսկայական շարքին Տաթևացին ավելացնում է շուրջ երկու տասնյակ նորակազմություններ. **անաջատություն, անբախելի, անբովանդակապէս, աներչոտ, անթառամելի, անխելամուտ, անհատողություն, անմաշելի, անմեղր, անմկրտեալ, անուսումնապէս, անպարագրելի, անստոյգ, անվարձատրելի** և այլն:

Նշենք նաև, որ մի շարք հեղինակներ, Հր. Աճառյանը, հետագայում՝ Ռ. Ղազարյանը, Լ. Հովհաննիսյանը, որոնք իրենց աշխատություններով համալրել են գրաբարյան բառարանները, բազմաթիվ անգամ հղում են Գրիգոր Տաթևացուն, ինչը դարձյալ հաստատում է այդ բառերի Տաթևացու հեղինակած լինելու փաստը: Օրինակ, Լ. Հովհաննիսյանի «Գրաբարի բառարան. Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր» աշխատության մեջ **ԱԽԹԱՐՄԱՅ. ԱՆՀԱՏՈՂՈՒԹԻՒՆ, ԱՌՆՉԱԿԱՆ, ԲԱՅԲԱՐՉՈՒԹԻՒՆ, ԿՈՊԻՏ, ՄԻՋԱԿՕՐԷՆ, ՊԱՏԱՐԱԳԵԼԻ, ՓՈԽԱՐԿԱՊԷՍ** բառերի դեպքում հղվում է դարձյալ Գրիգոր Տաթևացուն (տարբեր աշխատությունների): «Միջին հայերենի բառարանի» դեպքում այդ հղումները կազմում են՝ ընդամենը՝ **100**, որից «**Գիրք հարցմանց**»-ին՝ **79**-ը:

Նորահայտ բառերի ցանկը հետաքրքիր է անգամ բառարանագրության տվյալների առումով. ընդհանուր 470 նոր բառերը **գրեթե հավասար կիսվում են Ա-Կ (240) և Հ-Ք(230)** սահմանագծում, իսկ հայերենի գրեթե բոլոր բառարանները հենց այդտեղ են կիսվում:

Նոր բառեր կազմելիս Տաթևացին դիմել է հայերենի ավանդական բառակազմական եղանակներին՝ **բառաբարդմանը** և **ածանցմանը**, որոնց մեջ հանդիպում ենք հնարավոր գրեթե բոլոր ենթակադապարներին: Սակավաթիվ են նորակազմ բառերի մեջ **փոխառությունները**՝ գրեթե մեկ տասնյակ: Հազվադեպ ունենք նաև **արմատական** բառեր: Եվ միայն մի քանի նորակազմ բառ հիշատակվում է **ուրիշի ուղղակի խոսքում. անփորձել, մաքրելիք, նախաճաշակումն:**

Շատ ավելի քիչ են բառակազմական առումով խնդրահարույց նորակազմությունները, որոնցից մեկին փորձենք անդրադառնալ:

Տաթևացին **շինականի երեխայի ծննդյան օրը** կոչում է **ԱՂԱՐՈՒՔ** (Նա՛խ՝ որպես հասարակ շինականք ի ծննդեան զուակաց զմին օրն պատուեն աղարուք կոչելով: - 321): Այս բառի պարագայում մինչև բառակազմական վերլուծություն կատարելը պետք է պատասխանել, թե ինչ է այն նշանակել: Եթե հիմք ընդունենք **ՆՀԲ-ի՝ ԱՂԻ(Ք) - Որդի աղեսց. Սիրելի զուակ.** բացատրությունը, ապա կարելի է մեկնել՝ **զավակ, երեխա:** Կա նաև մեկ այլ տարբերակ. «Հայերեն զուառական բառարան»-ում **ԱՂ** բառահոդվածի տակ Սեբաստիա, Պոլիս բարբառների համար բերվում է մարմնի այն մասի բացատրությունը, «որ կը շոշափե ծննդական գործարանները» (Ղարաբաղի բարբառում՝ **աղուեսինք, ըղվեսուք**) նմանատիպ բացատրություն բերում է նաև Ստեփանոս Մալխասյանցը՝ «Հայերեն բացատրական բառարան»-ում, այսինքն այս կամ այն կերպ բառը եթե նշանակում է **ծնունդ, ժառանգ,** (այս դեպքում, ծագումնաբանորեն դրա հետ կարող ենք կապված տեսնել նաև **ԱՂԽ** բառը՝ «ցեղ, զարմ, ժողովուրդ» բացատրությամբ), ապա բառը կարելի է համարել **գոյական հիմքով կազմված ածանցավոր բառ** (-ուք վերջածանցի գոյականակերտ դրսևորումները ունենք ԱՅՐՈՒՔ, ԾԵԾԿՈՏՈՒՔ, ՍՐՏԽԱՌՆՈՒՔ և այլ բառերում): Հօգուտ **ծնունդ, ժառանգ** բացատրության վկայում է նաև **\*ԱՂՈՒՐԻ** (ըստ ՆՀԲ-ի՝ «ուղեշ, շառաւիղ», ըստ Աճառյանի՝ «որթի տաշտաթաղ անելու ճիւղը», ապա՝ «սերունդ, շառաւիղ») բառի գոյությունը հայերենում, սակայն այս դեպքում պետք է բացատրել **ԱՂՈՒՐԻ - ԱՂԱՐՈՒՔ** անցումը: Բառակազմական կաղապարը փոխվում է, եթե այն դիտարկենք կապված **«ԱՂԱԼ»** բառի հետ (ԱՂԱՐՈՒՔ՝ այսինքն աղալու, ուտելու, ծամելու միջոցառում). այս դեպքում էլ կունենաք բայական հիմքով կազմված ածանցավոր բառ. ի դեպ, Տաթևացին ունի նաև **ԱՂՈՐԻՔ** նորակազմությունը, որ նշանակում է **աղացող, աղալու միջոցներ:**(«Իններորդ՝ աղալն յերկանս. յաղորիս հոգւոյ և մարմնոյ ծակել»: - 339):

Այսպիսով, խնդիրը իմաստային դաշտում հարցեր է առաջացնում նաև բառակազմական կաղապարում, որտեղ առաջին հայացքից պարզ թվացող կառուցվածքում կարիք է առաջանում պատմական կամ տարժամանակյա վերլուծություն կատարել:

-----

**\*ԱՂՈՒՐԻ** բառը «Հայերեն արմատական բառարան»-ում չստուգաբանված բառերի շարքում է, որին հայագետը տալիս է «հագուագիտ» պիտակը:

Եվ եթե բառակազմական եղանակների քննությունը զուտ կաղապարների առումով շատ բան հաճախ չի ասում նորակազմ բառերի մասին, հետաքրքիր է սակայն, թե այս կամ այն բառակազմական կաղապարը ինչպես է օգտագործվում նոր նրբիմաստ արտահայտելու, բառը նոր նշանակությամբ օգտագործելու, բառիմաստի այս կամ այն կողմը ավելի շեշտելու համար:

Այս առումով, Տաթևացին Եզակի այն հեղինակներից է, որ կարողացել է բառակազմական կաղապարները շատ հաճախ օգտագործել ինքնատիպ, նորովի և ազատ: «Ենթակայության տակ գտնվող» իմաստով, օրինակ, Տաթևացին օգտագործում է **ՆԵՆԹԱԿԱՅՈՋ** բարդ բառը՝ ածանց + ածանց + հոդակապ + հիմք + վերջավորություն կաղապարով («Այլ ի մարմինն նիւթօրէն և սկզբնաբար. իսկ ի հոգին տեսակաբար և իբր նենթակայոջ»: - 567.): «Պարունակելի, բաղկացական, ենթակայության տակ, ենթակայության ներսում գտնվող» իմաստով այս բառը բերում է միայն Երեմիա Մեղրեցին **ՆԵՆԹԱԿԱՅՈՒՄ**՝ ձևով և կասկած չկա, որ այստեղ գործ ունենք «**նի + ենթակայութիւն**» կառույցի հետ, այսինքն՝ ենթակայության տակ, ենթակայության մեջ, ենթակայության ներսում գտնվող, հատկապես, որ **ենթակայ** նշանակում է նաև՝ «տակը եղած». այլ հարց է, որ Երեմիա Մեղրեցին **ՆԵՆԹԱԿԱՅՈՒՄ**՝ ձևը համարում է պարառական հոլովածն՝ հաշվի չառնելով բերվող օրինակի ներգոյական հոլովածնը («պարառական հոլովով, ենթակայ, բայց նշանակէ զպատահումն»<sup>2</sup>, ԵՄԲՀ, էջ 237): Եզակի այս գործածությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ Տաթևացու օրերում դեռ

---

<sup>2</sup> Մեջբերումը բերում ենք այնպես, ինչպես կա:

շարունակել է կենսական մնալ «նի» հնագույն նախածանցը՝ ներս, տակ, ներսում նշանակությամբ:

Կամ բոլորիս հայտնի **ԲՈՒՐՎԱՌ՝** խնկաման, բառը Տաթևացին բերում է **ԲՈՒՐԲԱՌ** ձևով, որ ըստ մեզ ավելի նախնի և հին ձև է: Բարդ բառ, կազմված գոյական + բայ՝ հիմք կաղապարով: Բառարանները վկայում են **ԲՈՒՐՈՒԱՌ**, ապա երկրորդաբար՝ **ԲՈՒՐՈՒՎԱՌ**, **ԲՈՒՐՎԱՌ** ձևերը: Կարծում ենք նախնական **ԲՈՒՐԲԱՌ** ձևից անցում է կատարվել **ԲՈՒՐՈՒԱՌ**, ապա՝ **ԲՈՒՐՎԱՌ** ձևին. առաջինի դեպքում ունենք բուրմունքը բառնալ, բարձրացնել, երկրորդի դեպքում՝ բուրմունքը առնել: Նախնական է **ԲՈՒՐԲԱՌ** -ը, որից և անցումը կատարվել է **ԲՈՒՐՎԱՌ** - ին՝ ժողովրդական ստուգաբանության սկզբունքով, եթե նկատի ունենանք, որ բուն նշանակությամբ բուրմունքը կարող է բարձրանալ, տարածվել, բայց ոչ վառվել («...և գո՛րծ է նոցա, հրամանաւ քահանային աւետարան կարդալ, քարոզել, և բառնալ քշոց և բուրբառ. և նստիլ ամենևին ո՛չ»: - 608.):

Օրինակ, **ԱԻԵԼ** (գերազանցող, շատ) բառը **ՀԱԲ** -ը համարում է «արմատ առանձին անգործածական» բնիկ հայերեն բառ. բառարանները այս իմաստով վկայում են **ԱԻԵԼԻ** ձևը: Անգործածական դառնալու համար բառը բավականաչափ երկար ճանապարհ պետք է անցներ, հետևաբար ենթադրելի է, որ **ԱԻԵԼ**-ը ավելի վաղ կիրառություն է ունեցել: Փաստը մեկ անգամ ևս արձանագրում է, որ Տաթևացու գրական ժառանգությունը անսպառ շտեմարան է ուսումնասիրելու հայերենի բազմաշերտ հարստությունները:

**ՊԱՏԿԵԼ** - ^Բազմապատկել: Վեցերորդ՝ միակն պատկելով բազմանայ. և աստուած է շարունակող բազմութեան էից: - 109. Ութերորդ՝ մինն պատկելով առնէ գտասն՝ և զհարիւր՝ և զհազար՝ և զքիւրն. և զանթիւն: - 109. Սակայն և նա՛ է ի թիւս յայս. այսինքն զի երիցս պատկելով երեքտասանն՝ լինի **լթ**. և ի քառասներորդումն պտղաբերի: - 263. Վասն այն նահապետքն զհարիւրն պատկէ՛ն որ է՛ ժամանակեան. և ի հազարն ո՛չ

հասանին որ մշտնջենաւորն է: - 291. ՂԱՄՀԲ - ն հղում է ԳՏԳՔԶ-ին: Առանձին «պատկել» բաղադրիչով գործածություն չնայած այլ աղբյուրներում չենք գտել, սակայն կասկածից վեր է, որ այն գործածական է եղել:

**ԿԱՍ -**

**ԶԿԱՅ** - Լինելը, առկայությունը: Եւ անտի յառաջ զբանական մասին կատարումն և գկայ՝ ցուցեալ: - 267. Այստեղ հեղինակը դիմել է «Կամ» բայի գոյականական գործածությանը, որ անսովոր չէ հայերենի համար, առավել ևս «զ» նախդրին սերտաճած ձևերը, ինչպես օրինակ՝ «զարկ», «զարթուն», «զեղծ» և այլն: Որևէ բառարան չունի վկայություն:

Ինչպես ասացինք, սակավաթիվ են նորակազմ բառերի մեջ փոխառությունները. (ԲՈՒՐԳԱԹՈՒՐ, ԵՍԹԱՆԱՆՈՒՆԴԻ, ԿՈՆՔԻԼՈՍ, ՋՀՈՒՏ, ՋՈՒԱՐԻ (ՋՈՐՈՋ), ՄԻՄՔՈՒՖՏ, ՎԱԻՌԷՔ (ՎՕՌԷԱՍ ՎՕՌԷՍՔ), ՓՕՍՍԱԶԻՍ, ՔԱԼԱՍԻԿԷ, ՔԱՐԹՈՇ, ՔՈՒԷԱՆԱՍ):

Սրանցից **ԲՈՒՐԳԱԹՈՒՐ**-ը քավարանն է, լատներեն՝ **PURGATORIUM** բառից: Բառի օգտագործելու շարժառիթը այն է, որ քավարանի գաղափարը հայոց եկեղեցին չի ընդունել, ուստի առավել ևս ընդգծելու դրա օտար, անընդունելի լինելը, Տաթևացին օգտագործում է ոչ թե՛ քավարան, այլ օտարաձև՝ **PURGATORIUM - ԲՈՒՐԳԱԹՈՒՐ** - ը, այսինքն փոխառության դիմելը դարձել է ոճական հնարանք:

Երեքը՝ **ՎԱԻՌԷՔ (ՎՕՌԷԱՍ, ՎՕՌԷՍՔ)**, հյուսիսային և հյուսիս-արևելյան քամիների լատիներեն անվանումներն են.

(**ՎԱԻՌԷՔ** - Հյուսիսային ցուրտ քամի: Եւ նախ ի չորս դէմս բաժանին ամենայն հողմունք. և իւրաքանչիւրքն դարձեալ յերիս բաժանին. որ լինի բովանդակն բժան: ...Իսկ Հիւսիսայինքն, Վաւռէք կոչին. որք են ցուրտ: - 205.

**ՎՕՌԷՍՔ** - Հյուսիսային ցուրտ քամի: Հիւսիսայինք որք կոչին Վօռէսք: - 205.

**ՂԱՄՀԲ** - ն հղում է ԳՏԳՀ - ին:

**ՎՕՌԷԱՍ** - Տեղումներին դիմակայող արևելյան քամի: Հիւսիսայինք որք կոչին Վօռէսք: Այն որ մերձ յարևելս է, Վօռէա՛ս կոչի. նեղէ՛ զամպս, և կապէ՛ զանձրևս: - 205. Եւ վօռէասն սեղմէ՛ զամպս և արգիլէ զանձրևս: - 205. Որևէ բառարան չի վկայում):

**ՔԱԼԱՍԻԿԷ** -ն նույնպես փոխառություն է լատրներենից և նշանակում է «յարդի վերին երակը». («Եւ կոչի վերին երակն քալասիկէ»: - 244: **ՂԱՄՀԲ** - ն հղում է ԳՏԳՀ-ին):

**ՋՈՒԱՐԻ (ՋՈՐՈՋ)**-ը նշանակում է «խաչ» և հենց հեղինակի վկայությամբ վրացերեն է. («Եւ տէր մեր յերկրի մարդացաւ, և յերկինս թագաւորեաց. իսկ նստիլն ի վերայ ջորոջ, որ է խաչն. զի վիրք զխաչն ջուարի կոչեն»): - 441.)

**ԵՍԹԱՆԱՆՈՒՆԴԻ** -ն. տեքստից հասկացվում է, որ խոսքը պաշտամունքային առարկայն է վերաբերում, սակայն փոխառության ակունքը պարզել չհաջողվեց. «Թէ էսթանանունդրին. որ է՛ դարիճակաւ արարած. այսինքն կաղպարաւ. և պաշտեցին»): - 387.

**ԿՈՆՔԻԼՈՍ** -ը ջրային կենդանի, խեցեմորթն է, որից լինում է ծիրանի գույնը: Ծիրանին ջրոյ. զի կոնքիլոսն որ ներկէ՛ զծիրանին՝ ի ջրո՛յ է. և Բեհեզն սպիտակ՝ երկրի. զի վուշն յերկրէ լինի: - 342. Բառարանները վկայում են «**ԿՈՆՔԵՂ, ԿՈՆՔԷԼ**» ձևերը:

**ՋՀՈՒՏ** - Հրեա: Քանզի ասէ թէ՛ ջուտն թարքմանի խոստովանօղ. քանզի խոստովանօղքն մեսիային փրկեսցին: - 28. **ՂԱՄՀԲ** - ն հղում է միջնադարյան մի շարք հեղինակների:

**ՍԻՍՔՈՒՖՏ** - Եւ այլքն պղինձ արծաթապատ. որպէս սիմքուֆտ, և կամ ոսկի: - 343.

Փոխառության ակունքը պարզել չի հաջողվել, առավել ևս, որ որևէ բառարան չի վկայում:

**ՓՕՍՏԱԶԻՄ** - Անհասկանալի բառ. ունի մեկանգամյա գործածություն՝ ընդ որում հղում է կատարվում Դամասկացուն. «հաւատն է սկիզբն հոգևոր կենացն: Եւ դամասկացին ասէ՝ «ի փօստագիս իրացն որ ո՛չ երևի յանդիմանութիւն»: - 571.

**ՔԱՐԹՈՇ** - Մողեսի տեսակ: Ասենք եթէ՝ մողեզն և կոկորդիլոսն որ քարթոշ ասեն, և յերկրի ազգի ազգի գեռունք արիւն ո՛չ ունին: - 511. Բառարանները վկայում են **ՔԱՐԱԹՈՇ** ձևը: **ԱԶԲ** - ն բերում է երկու ձևն էլ՝ առանց հեղինակային վկայության: **ՂԱՄՀԲ** - ն հղում է միջնադարյան մի շարք հեղինակների, այդ թվում և՛ ԳՏԳՀ-ին:

**ՔՈՒԷԱՆԱՄ** - Խորանարդի ձև ստանալ: Եւ կամ աննիւթ ինչ և անկերպ՝ ընդ նիւթական կերպարանաց ձևացեալ. յորում իւրաքանչիւրոցն էութիւնք անշփոթաբար երևին. որպէս պղինձ գնդացեալ. կամ քուէացեալ: - 476. Որևէ բառարան չի վկայում:

Բառակազմության եղանակի վերլուծության առումով հնարավոր է խոսել վերջին ձևի մասին, որ սուկածանցավոր բայական ձև է՝ կազմված **ՔՈՒԷ՝** «խորանարդ» արմատից, -ան միջածանցից և բայական «ամ» վերջավորությունից:

### ԱՐՄԱՏԱԿԱՆ ԲԱՌԵՐ

**ԴԷՇ, ԴՕՇ, ԳԻԺ, ԿՈՊԻՏ,**

**ԴԷՇ** - Անխելամիտ: Գլուխն մեծ, ցուցանէ գդէշն: - 246. Մեծ ականջն դէշ է և շատախօս: - 246. Վկայում է **ԵՄԲՀ** - ն **ԴԵՇ** ձևը՝ «խելագար» բացատրությամբ:

**ԴՕՇ** - Կրծքամաս: Աջոյ երին. յաջողակ բարի գործն. և Երբունն դօշն է. որ ունի զսիրտն: - 360. **ՂԱՄՀԲ** - ն հղում է ԳՏԳՀ -ին: **ՆՀԲ** - ն **ԿՈՒՐԾՔ** բառի տակ գրում է «լայնաբար՝ Սիրտ, ստինք, կուշտ, էրբունծ»:

**ԳԻԺ** - Կենթ, խելագար: Այլ և ի վերայ այսր, հիւանդն և գիժն. որ մտօքն է մոլի...: - 371. **ՆՀԲ** - ն բերում է բառարանի «**Աշխարհիկ բառք**» հավելվածում: **ՂԱՄՀԲ** - ն հղում է ԳՏԳՀ -ին:



**ԿՈՊԻՏ** - Վերստ, կոշտ: Չորրորդ պակասություն է՝ զի այժմ է՝ մարմին մեր թանձր և կոպիտ. այլ յայնժամ բառնի այս ի մարմնոյ և լինի անօսը և թափանցիկ. գոր ոչ պարիսպ կամ բանտ ըմբռնել կարիցէ: - 722. **ՆՀԲ**- ն վկայելով **ԿՈՊՏԱՋԵԻ** բառը՝ բացատրում է «Ի կոպիտ բառէն, որ կայ ի ռամկօրէն»: Աճառյանի «Հայերէն արմատական բառարան»-ում չստուգաբանված բառերի շարքում է. չնայած վկայությունների մեջ Տաթևացի թվարկվում է երրորդը (Մեծովեցի, Ջաքարիա սարկավագ), սակայն ժամանակագրական առումով առաջին գործածությունը նրանն է: **ԼՀԳԲ**-ն հղում է Գրիգոր Տաթևացու «Մեկնութիւն Յոհաննո» աշխատությանը:

Հայերէնի բառակազմական կաղապարների վերլուծության հայտնի մոտեցումների հաշվառումով մոտ չորս հարյուր բառերը նպատակահարմար է ներկայացնել ըստ բարդ և ածանցավոր բառերի տրոհման, իսկ բարդ բառերը ըստ Մանուկ Աբեղյանի եռախումբ դասակարգման (հարադրական, կցական և իսկական), կամ դրա հիման վրա հետագայում ընդունված երկակի բաժանմամբ՝ անիսկական և իսկական բարդություններ (տես՝ Գ.Բ.Չահուկյան, Է.Բ.Աղայան, Վ.Դ. Առաքելյան, Վ.Ա.Քոսյան, Հայոց լեզու, 1-ին մաս, Ա պրակ, Երևան, 1980թ., էջ 429-443):

Անիսկական բարդություններից (կրկնավոր, հարադրական, կցական) **կրկնավոր** բարդության օրինակներ նորակազմ բառերի մեջ Տաթևացին չունի:

Կան **հարադիր բարդությունների** սակավաթիվ դեպքեր. **անել նշանս, առնել նշանս, մեղս դնել, վեր քարշել, վկայ բերել, օրինակ տալ**:

**Հարադիր + գոյական** կաղապարով են կազմված՝ **ԱՆԵԼ ՆՇԱՆՍ, ԱՌՆԵԼ ՆՇԱՆՍ, ԴՆԵԼ ՄԵՂՍ** հարադրությունները.

**ԱՆԵԼ ՆՇԱՆՍ** - Նշաններ ցույց տալ: Թուի թէ և այս յոչ պատշաճէն ասի զի վնասեալք էին հաւատովք՝ ո՛չ էր պատշաճ **անել** նոցա **նշանս**: - 44

Նույն իմաստով է օգտագործում «առնել նշանս» բառակապակցությունը.

**ԱՌՆԵԼ ԼՇԱՆՍ** - Չորրորդ՝ վասն ոչ ախորժողաց՝ իբր ոչ կարաց անդ նշանս ատնել վասն անհաւատութեանց նոցա: - 44

**ԴՆԵԼ ՄԵՂՍ** - Մեղադրել: Ոմանք զյանցանս մտաց կատարեալ մեղս դնեն. բերելով վկայութիւն ի տեսունէ թէ՛ «շնացաւ ի սրտի իւրում»: - 720

**Գոյական + հարադիր** կադապարով են կազմված՝ **ՎԿԱՅ ԲԵՐԵԼ, ՕՐԻՆԱԿ ՏԱԼ** հարադրությունները.

**ՎԿԱՅ ԲԵՐԵԼ** - Վկայաբերել, վկայակոչել: Ոմանք թուզ ասեն. թէ ի նոյն ժամն որ կերաւ և մերկացաւ՝ և կարեաց ի տերևոյ նորա. և վկայ բերեն թէ՛ վասն այն անէծ զթզենին յերուսաղէմ: - 224. Որպէս արիոս վկայ բերելով «ո՞ ել յերկինս և իջոյց զքրիստոս». և թէ՛ «հայր սրբեաց և առաքեաց»: - 475. Իսկ ոմանք յետ ծննդեանն ի կուսէն ասեն օծեալ զքրիստոս ի մկրտութեանն. վկայ բերելով «զիսուս որ ի նազարէթէ, զոր էօծ աստուած հոգով և զօրութեամբ»: - 475. Եւ բերէ՛ վկայ զբանն սաղմոսին «փրկեցեր զանձն իմ ի դժոխոց ներքնոց»: - 504. **ՂԱՄՂԲ** - և բերում է **ՎԿԱՅ ԲՈՆԵԼ** ձևը:

**ՕՐԻՆԱԿ ՏԱԼ** - Դարձեալ գիտելի է, զի պօղոս ի կորնթացոցն զհատ սերման՝ օրինակ տայ յարութեան մարդկան և ասէ. «ա՛նմիտ՝ դու զոր սերմանես ո՛չ կենդանանայ թէ ոչ մեռանի»: - 338 Երրորդ, քաղցր է և փափագելի. զի զամենայն ինչ որ բարի է ի ստեղծուածս՝ օրինակ տամք ստեղծողին: Որպէս լոյս, գեղեցիկ, քաղցր, և այլն: - 555 Եւ ոմանք ոչ ինչ համարին զյանցանս մտաց. և ո՛չ դնեն ի կարգս մեղաց. օրինակ տալով իբր զդատարկ սեղան ոչ ինչ կերակրել. և իբր զպտուղ ծառոց տեսութեամբ միայն վայելել: - 720 Երկրորդ՝ զի և վարդապետն իւր ես օրինակ զհատն ցորենոյ: - 720

**Մակբայ + բայ** կադապարով է կազմված՝ **ՎԵՐ ՔԱՐՇԵՍ** հարադրությունը.

**ՎԵՐ ՔԱՐՇԵՍ** - Վեր ձգել: Այլ Ամպն լինի, յորժամ զօրութեամբ արեգականն ի վեր քարշին գոլորշիքն ի ջուրց և ի գէջ տեղեաց: - 204. Եւ դարձեալ ի վեր քարշեալ ժողովին

ի ծայրս խոտոց. և ծանրացեալ կախին իբրև զմարգարիտս: - 204-205. Իսկ Կարկունն ծնանի ի յամեննիմբ ջերմ ամպոյ, զօրութեամբ արեգականն ի վեր քարշեալ: - 205. Եւ զի քարշեն լուսաւորք զգոլորշին յերկրէ՝ յայտ է ի ցօղ առաւօտուն և յեղեամն. որ ի զիշերն ի վեր քարշին. և ընդ ծագել լուսոյն հատանին և յետս յերկիր անկանին. և յաւուրս ձմերան լինի եղեամն. և յամարան ցօղ: - 208. ՂԱՄՀԲ - ն, «վեր» բաղադրիչով վկայում է ՎԵՐ ԲԵՐԵՄ, ՎԵՐ ԶԳԵՄ, ՎԵՐ ԸՆԿՆԵՄ և այլն. ՎԵՐ ՔԱՐՇԵՄ ձևը չունի:

**Անխկական բարդության կցական կառուցվածքի** եզակի նմուշներից է **ԵՐԿԴՐԱՄԻ** բառը՝ ըստ խոսքի մասային պատկանելության կազմված **ԵՐԿ** թվականից, **ՂՐԱՄ** գոյականից և վերջածանցից:

**ԵՐԿԴՐԱՄԻ** - Երկու դրամ՝ հինգ դանկի հավասար արժողությամբ: Չարծաթն է առ ի համարոց գլխոցն կես երկդրամի որ է՝ Ժ. դանկ: - 344. ԱԶԲ - ն ունի **ԵՐԿԴՐԱՄԵԱՆ** ձևը՝ «երկու տրամնոց» բացատրությամբ:

Նորահայտ բառերում, ինչպես և սպասելի էր, գերակշիռ մաս են կազմում **խկական բարդությունները**: Դրանք իմաստային դաշտերով ներկայացնելու պարագայում, աչքի է ընկնում կրոնական- ծիսական ոլորտին և մարդուն, նրա կառուցվածքին, խառնվածքին. վերաբերող բառերի բազմությունը:

Առաջին խմբում են՝ **բազմաքրիստոս, ողջոյնընկալ, ողջոյնառաք, դևակոչ, գերեզմանօրհնէք, ծռատօն, սերմնօրհնէք, մայրօրհնէք, տօնահմայք, քահանաթաղէք, քահանայօրհնէք** բառերը. սրանց մի մասի դեպքում ունենք նաև հետաքրքիր պատմական տեղեկություններ ծիսական արարողակարգերի վերաբերյալ:

Խոսքի մասային պատկանելությամբ ունենք՝

**գոյական + գոյական` գերեզմանի օրհնություն (գերեզմանօրհնէք), սերմի օրհնություն (սերմնօրհնէք), մոր օրհնություն (մայրօրհնէք), տոնին հմայող (տօնահմայք), քահանայի օրհնություն (քահանայօրհնէք).**

**գոյական + բայ. ողջույնը ընկալող (ողջոյնընկալ) ողջույնը առաքող (ողջոյնառաք), դներին կանչող (դնակոչ), քահանայի թաղում (քահանաթաղէք).**

**ածական + գոյական` ծուռ տոն (ծռասոն):**

Բանավիճելով երկաբնակների հետ (Զի՞նչ պատասխանեմք երկաբնակացն որք հարցանեն զմեզ, թէ մասունքն քրիստոսի աստուած է՝ այսինքն ոտքն և ձեռքն և գլուխն ապա բազմաստուածք էք: ... Պատասխանի: Ապա ուրեմն երևեցաւ՝ զի թէ մասունքն քրիստոսի ասին և աստուծոյ ո՛չ ասին, յա՛յտ է թէ զքրիստոս ո՛չ խոստովանին աստուած: Ապա ըստ այսմ հետևի՝ զի մարիամ մայր քրիստոսի լինի և ո՛չ աստուծոյ. զի լաւ է քրիստոսածին և մարդածին կոչիլ՝ քան թէ աստուածածին: ... Զա՛յս հարցեր, եթէ մասունքն քրիստոսի աստուած են, նան բազմաստուած էք. զի բազում են մասունքն: Եւ ես ասեմ քեզ. զի թէ մասունքն քրիստոսի քրիստոս է, ապա բազմաքրիստոս էք և դուք: - 91-92:)' Տաթևացին եզրահանգման մեջ օգտագործում է «բազմաքրիստոս»՝ բազում քրիստոսներ ունեցող, բառը:

**ԳԵՆԵԶՄԱՆՕՐՀՆԷՔ** - <sup>^</sup>Գերեզմանի օրհնության կարգ, որ կատարվել է **Ավագ շաբաթվա** ուրբաթ օրը՝ խորհրդանշելով Յիսուս Քրիստոսի գերեզման դրվելն ու դժոխքի ավերումը. «Զգերեզմանս յորո՞ւմ աւուր պարտ է օրհնել: Պատասխանի: Ի մեծի ուրբաթին: Զի բշաբաթին մեռելո՛ց է և ո՛չ գերեզմանօրհնէք: Եւ այս է խորհուրդն. զի յայնմ աւուր խաչեցաւ քրիստոս, և գերեզմանք բացան և այլն: Եւ ի նոյն օրն ի գերեզման եմուտ և էջ ի դժոխս և քարոզեաց»: - 684. Զի՞նչ է գերեզմանօրհնէքն: - 684.

**ՀԳԲ** - ն գործածական է համարում Ղարաբաղ, Ախալքալաք բարբառների համար՝ «հանգուցեալին գերեզմանը քահանային օրհնել տալու գործողութիւնը» բացատրությամբ: Բառը փոխանցվել է բարբառներ՝ երևույթի ընդհանրացմամբ և բառիմաստի ընդլայնմամբ, այսինքն եթե ի սկզբանե այն բացառապես վերաբերել է

գատկական Ավագ Ուրբաթ օրը կատարվող գերեզմանի օրհնության կարգին, հետագայում աստիճանաբար ներառել է ընդհանրապես գերեզմանի օրհնության կարգը:

**ԾՌԱՏՕՆ** - <sup>^</sup>Միակ կամ ծուռ տոն: Յորում ամի եղև ծռատօն գատկաց ազգի կոչեցեալ յունաց. ի վերոյ ասացեալն աւուր նորոյս տէրունեաց: - 789. «Գաւառական» -ը բառաձևը գործածական է համարում Բաբերդ, Կարին, Մարաշ բարբառների համար՝ «Հունաց ս. Գեորգի տոնի օրն է» բացատրությամբ: **ՂԱՄՀԲ** - ն «Հույների ս. Գեորգի տոնը, որ հայերի համար տոն չէ» բացատրությամբ հղում է **ԺԴ** դարի Հայերեն ձեռագրերի հիշատակարաններին: **ԼՀԳԲ** - ն անդրադառնում է Գրիգոր Տաթևացու մեկ այլ նմանատիպ նորակազմ բառի՝ **ԾՌԱԶԱՏԻԿ** («Լուծումն պարապմանց Կիրողիե գրքից») «Տոմարական հաշիվներով սխալ գատիկ»՝ բացատրությամբ:

Քահանայի զգեստի այլաբանական կողմերը բացատրելիս, օրինակ, Տաթևացին այն համեմատում է և **բոլորապատ** երկնքի հետ. **բոլորապատ** -ը կազմվելով **բոլոր** (առաջին իմաստը՝ լրիվ, ամբողջ, երկրորդ իմաստը՝ կլոր, շրջանաձև) և **պատել** բառաձևերից: Դիմելով **բոլոր**-ի երկրորդ՝ կլոր, շրջանաձև իմաստին և այն համադրելով պատել -ի հետ, հեղինակը ստացել է «շուրջ բոլորը պատող, շրջանաձև պատված» իմաստը:

Երկրորդ մեծ խումբը վերաբերում է մարդուն, նրա կառուցվածքին և խառնվածքին. **աղուեսաբարոյ, արձակաքայլ, բազմակույլ, բացունչն, բոնամիտ գիճասեր, երկայնամագ, թիրամիտ, թխակն, կամարունքն, կարճամատն, հսկայանդամ, մագաձածուկ, մասկոյտ, շանաղէմք, շատակույլ, ուղղաձև, սևամորթ, փոքրախելք** ևն:

Խոսքի մասային պատկանելությամբ ունենք՝

**գոյական + գոյական՝** աղվեսի բարք ունեցող (**աղուեսաբարոյ**), շան դէմք ունեցող (**շանաղէմք**)

**գոյական + բայարմատ` ցանկություն սիրող` ցանկամոլ (գիճասէր)**

**ածական + գոյական` արձակ քայլող (արձակաքայլ), շատ ուտող (բազմակուլ), բռնամիտ, երկայնամագ, թիրամիտ, թխակն, կարճամատն, հսկայանդամ, ուղղաձև, սևամորթ, փոքրախելք:**

**ԱՂՈՒԵՍԱԲԱՐՈՅ** - **^**Աղվեսի բարք ունեցող, խորամանկ: Որ արագ ընթանայ և զսպէ զինքն` և զերեսն կորակնէ՛ և զբոլոր մարմինն կծկէ՛, երկնչո՛տ է և ըռիշտ և աղուեսաբարոյ: - 247. **ՂԱՄՀԲ** - ն հղում է **ԳՏԳՀ** -ին:

**ԱՅԼԱՄԱԶ** - **^**Այլ մագ ունեցող: Եօթներորդ` քաճաւարին. այլամագն խառնեալ. զանազան բարուց նշանակ: - 371. «Ուրիշի կամ այլ մագ» բացատրությամբ **ՂԱՄՀԲ** - ն հղում է **ԳՏԳՀ** -ին: **ՏԵՄ`** նաև **ՔԱԾԱԻԱՐԻ**:

**ԱՐՁԱԿԱՔԱՅԼ** - **^**Լայն քայլ զցող: Արձակաքայլն` մեծասիրտ է: - 247. **ՂԱՄՀԲ** - ն հղում է **ԳՏԳՀ**-ին: -**ՀԱԲ**

**ԲԱԶՄԱԿՈՒԼ** - **^**Ագահ, շատակեր: Բերանն մեծ` բազմակո՛ւլ է և անգութ և անհնազանդ: - 247. **ՂԱՄՀԲ** - ն հղում է **ԳՏԳՀ** - ին: -**ՀԱԲ**

**ԲԱՅՈՒՆՉՆ** - **^**Լայն ռունգեր ունեցող: Բացունչն` զուարթ է և ուժեղ: - 246. **ԼՀԳԲ**-ն հղում է **ՍԳՆԲ**:

**ԲՈՒՆԱՄԻՏ** - **^**Անընդունակ, անմիտ: Վասն է՞ր մին տղայն ուշիմ և մտացի լինի. և մինն ապուշ և բռնամիտ: - 251. **ՂԱՄՀԲ** - ն հղում է **ԳՏԳՀ** - ին:

**ԵՐԿԱՅՆԱՄԱԶ** - **^**Երկարամագ, երկար մագ ունեցող: Երկայնամագ և թանձրն` զազանաբարո՛յ է և մեծախորհուրդ: - 248. **ՂԱՄՀԲ** - ն հղում է **Գ**իրք վաստակոցին և **ԳՏԳՀ**-ին:

**ԹԻԻՐԱՄԻՏ** - Խոտոր, մոլոր միտք ունեցող: Իսկ ամենայն անդամք որ ներհա՛կ են այսմ, գրթիրամիտն ցուցանեն: - 248. Որևէ բառարան չունի վկայություն:

**ԹԽԱԿՆ** - Թուխ աչք ունեցող: Թխակն վատո՛ւժ է և ազահ: - 246. Իսկ թխակն և կարմրագոյն՝ քան զգազան չա՛ր է: - 246. **ՂԱՄՀԲ** - ն հղում է ԳՏԳՀ - ին: **ՆՀԲ** - ն և **ԱԶԲ** - ն բերում են՝ **ԹԽԱԿՆՈՒԹԻՒՆ**՝ «թխակն գոլ», «սևաչուի ըլլալը» բացատրությամբ. Առանձին բառահոդված չի բերվում:

**ԿԱՄԱՐԱՈՒՆՔՆ** - Կամար հոնք ունեցող: Կամարաունքն՝ թէ ի վերոյ շարակցեցին՝ սակաւիմա՛ստ է. թէ վայր ի յնգունսն հասցէ, սրամիտ է: - 246. Որևէ բառարան չունի վկայություն:

**ԿԱՐՃԱՄԱՏՆ** - Կարճ մատներ ունեցող: Հաստ ձեռն և կարճամատն, նենգաւո՛ր է և գող: - 247. **ՂԱՄՀԲ** - ն մի հղում է ԳՏԳՀ - ին:

**ՀՄԿԱՅԱՆԴԱՄ** - Հաղթահասակ, հսկայամարմին: Այլ որ առաւել մեծն է և հսկայանդամ, և կարի փոքր և փանաքի, յերեսնամեայ հասակն իւրեանց չափաւորին: - 726. Որևէ բառարան չունի վկայություն:

**ՄԱԶԱԾԱԾՈՒԿ** - ^Մազով ծածկված, թավամազ: Լանջքն որ փորին մազածածո՛ւկ է՝ անկրօն է և անկայուն և անգութ: - 247. **ՂԱՄՀԲ** - ն հղում է ԳՏԳՀ -ին:

**ՄՄԱԿՈՅՏ** - Մսեղ: Լանջքն մսակոյտ՝ տխմա՛ր է: - 247. **ՂԱՄՀԲ** - ն հղում է ԳՏԳՀ -ին:

**ՇԱՆԱԴԷՄՔ** - ^Շան դեմք ունեցող, շնակերպ: Իսկ թէ մարդ լինի շանադէմք, և այն ո՛չ է ի խառնուածոյ շանց, այլ նշան է հայրենեաց, կամ սպի անձանց: - 267. Բառը հետաքրքրական է այնքանով, որ ժողովրդական խոսքում տարածված «շան երես» (պնդաճակատ, անամոթ իմաստով) արտահայտությունը ի սկզբանէ ուղիղ իմաստով վերաբերել է մարդկանց, որոնց դեմքը շնակերպ է եղել, ինչպէս, որ սովորաբար տեղի է ունենում փոխաբերական խոսքի հետ. այսինքն «շանադէմք»-ը և «շան երես»-ը ծագումնաբանորեն նույն իմաստն ունեն: **ԼՀԳԲ** - ն հղում է **ՍԳՆԲ** -ին:

**ՇԱՏԱԿՈՒԼ** - ^Շատակեր: Ճակատն նեղ՝ շատակո՛ւլ է: - 246. Ձեռքն թիր՝ շատախօ՛ս է. և շատակուլ: - 247. **ՂԱՄՀԲ** - ն հղում է ԳՏԳՀ -ին:

**ՈՒՂՂԱՁԵԻ** - Ուղիղ ձև ունեցող, ուղղաձիգ: Հինգերորդ՝ զի մարդն իշխան և տեր է ամենայն կենդանեաց. վասն որոյ ամենայն կենդանիք գլխակո՛ր են իբրև զճառայ և հնազանդ. և մարդն ուղղաձև իբրև ազատ և թագաւոր: - 233. Դարձեալ՝ մարդո՛յս է ուղղաձև լինիլ որպէս ցուցաւ: - 275. Որևէ բառարան չի վկայում:

**ՍԵՒԱՍՈՐԹ** - Սև մորթ, մաշկ ունեցող: Սևամորթն՝ զխորամանկն յայտնէ: - 247. Որևէ բառարան չի վկայում:

**ՓՈՔՐԱԽԵԼՔ** - Դճ խելացի: Ճակատն նեղ՝ շատակո՛ւլ է: Իսկ լայնն՝ փոքրախելք: - 246. Որևէ բառարան չի վկայում:

### Ածանցավոր բառեր

Բառակազմական ենթակադապարները այս դեպքում նույնպէս բազմազան են. ունենք բառակազմական առումով հետաքրքիր **ԱՋՈՒԱԾ(Ք)** բառը՝ աջակողմյան, աջ կողմից հարող, ածող իմաստով: Բառը, հավանաբար, ստեղծվել է **աստ-ու-ած (աջ-ու-ած(ք))** բառի կադապարի համաբանությամբ: **ԱՋՔ** - ն վկայում է **ԱՋՈՒ** ձևը՝ «աջ» բացատրությամբ:

**ԱՋՈՒԱԾ(Ք)** - Աջակողմյան, աջ կողմից հարող, ածող: Եւ թէ յաջոյ յաջուածոց ինենշուրթին մեղկէ, վերնոյն հեշտալեաց հաւատա՛ւ և ո՛չ իսաբիս: - 770.

«Հայերեն արմատական բառարան»-ում անդրադառնալով **ԱՐԵԻ** բառին՝ Աճառյանը գրում է. «արեգակն աստղն է, իսկ **արև՝ նրա լոյսը**» (ՀԱԲ, հ. Ա, էջ 311). Տաթևացու **ԱՐԵԻ-ԱՊԷՍ** նորակազմությունը հաստատում է անվանի հայագետի կարծիքը, չնայած այս բառով Տաթևացուն նա չի վկայում. «Իսկ տիւ և գիշեր, այսինքն՝ արևապէս հասումն նոցա՛ տիւ է համարեալ. և անհասութիւն խորոցն աստուծոյ՝ գիշեր: - 76», ըստ այդմ՝ «արևապէս» պետք է հասկանալ «լույսի նման, ճառագայթակերպ, լուսակերպ»:



**ԱՐԵՒԱՊԷՍ** - Ճառագայթակերպ, լուսակերպ: ըստ այդմ՝ «արևապէս» պետք է հասկանալ «լույսի նման, ճառագայթակերպ»:

**ԿԻՍՍՏԵԼ** - Թերի թողնել, ընդհատել, պակասեցնել: Երրորդ՝ թէ խոստովանօղն կիսաստեաց զխոստովանութիւնն և ծածկեաց: - 603. Վկայում է **ԵՄԲՀ** - ն՝ «կիսել, **ընդմիջել** և յերկուս հաւասար մասունս բաժանել» բացատրությամբ: Բառաբացատրությունը հետաքրքրական է այնքանով, որ կիսել՝ «երկու մասի բաժանել» սկզբնական իմաստը **«աստ»** միջածանցով ստացել է երկրորդային նոր իմաստ՝ թերի թողնել, ընդհատել: Բարբառներում ունի նաև՝ «պակասեցնել» իմաստը:

«Հայերեն արմատական բառարան»-ում միայն Շիրակացու միանգամյա գործածությամբ Աճառյանը բերում է **ԴԵՂԲ** բառը, որ նշանակում է «դեղին»: Շիրակացու վկայության ճշտությունը նա հիմնավորում է բարբառներում առկա **«ԴԵՂԲԵԼ»** ձևով, ապա շարունակում. «Բառիս գոյութեան նոր ապացոյց է **դեղբագոյն** «դեղնագոյն» նորագիւտ բառը, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած...»(ՀԱԲ, հ. Ա, էջ 650): Մեկ այլ՝ Յայսմաւուրք -ի, դարձյալ մեկանգամյա գործածությամբ վկայակոչվում է **ԴՈՆ** բառը՝ «մի տեսակ հաց» բացատրությամբ. բառը հայագետը համարում է **Բնիկ հայ բառ**: Որևէ կասկած չի հարուցում, որ անգամ մեկանգամյա գործածությամբ բառը ինքնին վկայության է տալիս, և ավելորդ է ասել, որ լեզվամտածողության առումով ցանկացած միավոր անկրկնելի է:

**Համակարգված ներկայացնելով Տաթևացու նորակազմությունները՝ կարծում ենք, որ մեր հարստության անսպառ գանձարանը՝ ոսկեդինիկ հայերենը իր մոռացված մի էջն է երևակել:**